ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«20» 05 2026 թ. N 81-Հ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԹԻՎ 30-Լ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հանձնարարում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 1-ի «Առանձնապես ծանր, հասարակական հնչեղություն ունեցող և այլ հանցագործությունների դեպքերը զեկուցելու վերաբերյալ» թիվ 30-Լ հանձնարարականում (այսուհետ՝ հանձնարարական) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հանձնարարականի վերնագրում «ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԾԱՆՐ,» բառերից հետո լրացնել «ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ,» բառերը.

2) հանձնարարականի նախաբանում «առանձնապես ծանր» բառերից հետո լրացնել «, անչափահասների նկատմամբ կատարված» բառերը.

3) հանձնարարականի 1-ին կետում «այնուհետև նրա» բառերը փոխարինել «և նրա» բառերով.

4) հանձնարարականի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով.

«2.1) անչափահասների նկատմամբ կատարված առանձնապես ծանր, ծանր, ինչպես նաև հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունների դեպքերի վերաբերյալ.».

5) հանձնարարականի 1-ին կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունում «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական» բառերը փոխարինել «Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության» բառերով.

6) հանձնարարականի 2-րդ կետում «համակարգող տեղակալին» բառերից հետո լրացնել «կամ Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին» բառերը.

7) հանձնարարականի 3-րդ կետում «Կոմիտեի նախագահին և նրա՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին» բառերը փոխարինել «Կոմիտեի նախագահին (Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում), նրա համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին կամ Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին» բառերով.

8) հանձնարարականի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն հանձնարարականի 1-ին կետի 2.1-ին ենթակետով նախատեսված հանցագործությունների դեպքերով քննվող քրեական վարույթներով ձերբակալելու, ձերբակալումից ազատելու կամ խափանման միջոց կիրառելու կամ փոխելու, քրեական հետապնդում հարուցելու, չհարուցելու կամ դադարեցնելու միջնորդություն ներկայացնելու դեպքում նախօրոք զեկուցել Կոմիտեի նախագահին (Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում), Կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին կամ Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին, իսկ նրանց կողմից՝ Կոմիտեի նախագահին:

Դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումը հարուցելու կամ չհարուցելու կամ դադարեցնելու դեպքում զեկուցել Կոմիտեի նախագահին (Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում), Կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին կամ Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին, իսկ նրանց կողմից՝ Կոմիտեի նախագահին:».

9) հանձնարարականը լրացնել հետևյալ բովանդակությամբ «3.1-ին» կետով.

«3.1. Կոմիտեի նախագահի տեղակալներին և Կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների պետերին՝

սույն հանձնարարականի 1-ին կետի 2.1-ին ենթակետով նախատեսված հանցագործությունների դեպքերով քննվող քրեական վարույթները վերցնել հսկողության և ընթացքի վերաբերյալ պարբերաբար զեկուցել Կոմիտեի նախագահին:»:

2. Սույն հանձնարարականն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին և մյուս ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ